

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-18

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«21» __01__ 2020թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), ի դեմս նախագահ Ռ. Մարտիրոսյանի, որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրենի Ժ.Կ.Կ. Լիլիթ Սահակյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 99 188 100 (ինսունինը միլիոն հարյուր ութսունուրե հազար հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, այդ թվում՝ նպատակը, օրացուցային պլանը, այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ -ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարիության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 99 188 100 ՀՀ դրամ:

(թվերով և բառերով)

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղդասյան 24

ՀՀ Ֆինանսների նախարարություն

հ/հ 900011024115

ՀՎՀՀ 0005673

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային

հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ

ք. Երևան Արուսյան 68

Երևանի թիվ 1 տեղ. գանձ բաժանմունք

Հ/հ 900018005414

ՀՎՀՀ 01506627

Նախագահ՝ Սարախրոյան



Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

Տնօրեն ժ.պ.կ՝ Լ. Սահակյան



(Լ. Սահակյան)
(անուն ազգանուն)

Հավելված N 1
« 21 » 01 20.. թ.
N 2-18 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրենի ժ.պ.կ. Լիլիթ Սահակյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 21 » 01 20.. թ. N 2-18 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ է 99 188 100 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ

Նախագահ՝

Ռ. Մարտիրոսյան

ՌԱՆԻԿ ԱՆՇԵՐԱՅԱՆ



Կազմակերպություն

Տնօրենի ժ.պ.կ.՝

Լիլիթ Սահակյան
(ստորագրություն)

Լիլիթ Սահակյան
(անուն, ազգանուն)



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Նպատակն է ՀՀ տարբեր տարածքների էկոլոգիական իրավիճակի համալիր գնահատումը, էկոլոգիական, առողջական և սննման շղթայի ռիսկի գործոնների բացահայտումը և գնահատումը, էկոլոգիական փորձաքննության գիտամեթոդական հիմունքների մշակումը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Հետազոտություններն ընդգրկում են դաշտային աշխատանքներ, նմուշների մշակում, տարրալուծում, ստացված տվյալների վերլուծություն: Ծրագրով նախատեսված հետազոտությունների ընթացքում կկիրառվեն զանազան հմտություններ (no-how), դաշտային էքսպրես անալիզի սարքավորումներ, տարածակողմնորոշող թվային տեխնիկա և քարտեզներ, տիեզերական լուսանկարներ, էքսպերտային դասի գերձզգրիտ տարրալուծման սարքեր, GIS տեխնոլոգիաներ և համակարգչային մոդելավորում:

Հետազոտությունների գիտամեթոդական հենքն է հանդիսանում գեոէկոլոգիական սկզբունքը, երբ բոլոր տվյալները տարածաժամանակային կապ են ստանում: Օգտագործելով տարածքը որպես օբյեկտիվիզացնող գործոն հնարավոր է դառնում համադրել տարբեր, առաջին հայացքից իրար հետ առնչություն չունեցող տվյալները, օրինակ՝ թույլ երկրաշարժերը ու քաղցկեղի զարգացումը, ծանր մետաղներով հողերի աղտոտվածությունը և պերինատալ մահացությունը և այլն: Շնորհիվ նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը՝ հնարավոր է դառնում իրականացնել խորը, մանրակրկիտ ուսումնասիրություններ՝ ի հայտ բերելով մինչ օրս անհայտ երևույթներ և ռիսկի գործոններ, ինչի շնորհիվ կարելի է մշակել կանխարգելիչ և վնասը նվազեցնող միջոցառումներ:

Շնորհիվ իրականացված բազմաթիվ դրամաշնորհների և պայմանագրային աշխատանքների՝ էկոլոգիաներին ապահովված է դաշտային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ամենագնաց ավտոմեքենաներով, տեղափոխելի ժամանակակից անալիտիկ սարքերով և դաշտային պարագաներով: Կենտրոնի կազմում գործում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից արտոնագրված Անալիտիկ փորձարարական լաբորատորիան (հավատարմագրում ISO 17025-2005, № 027/T-027), որը համալրված է թանկարժեք էքսպերտային դասի տարրալուծման սարքավորումներով:

Կենտրոնում գործում են «Բնապահպանություն և բնօգտագործում» մագիստրոսական և ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնները, որոնցում պատրաստվում են անհրաժեշտ որակավորման երիտասարդ մասնագետները: Առկա է նաև հայցորդների և ասպիրանտների ուսուցման հնարավորությունը, որն ապահովում է ակտիվ գիտնականների որակավորումը:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

2020թ.-ին ծրագրով նախատեսված է շարունակել երկրաբնապահպանական և էկոլոգիական անվտանգության հիմնահարցերին ուղղված միջոցառումները հիմնարար հետազոտությունները,

որոնք բերված են ստորև՝ ըստ առանձին ուղղությունների և ստորաբաժանումների:

Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժին. նախատեսվում է քաղաքային տարածքների փողոցային փոշու մեխանիկական և քիմիական կազմի ուսումնասիրում, փողոցային փոշու մեխանիկական և քիմիական կազմի առանձնահատկությունների դուրսբերում, ջրի որակի վրա քաղաքային միջավայրի ազդեցության գնահատման նպատակով Հրազդան գետի Երևան քաղաքում ընկած հատվածի մոնիթորինգ, Երևան քաղաքի ծառատեսակների աղտոտիչ նյութերի միացությունների կլանման առանձնահատկությունների հետազոտություն:

Ռադիոէկոլոգիայի բաժին. նախատեսվում է գնահատել բնական ռադիոակտիվության տեխնոլոգիական մասնաբաժնի ավելացումը ՀՀ լեռնահանքային խոշոր կենտրոն հանդիսացող Ալավերդի քաղաքում: Որոշվելու են բնական ռադիոնուկլիդների բաշխվածությունը քաղաքային հողերում, հանքարդյունաբերական թափոնների ռադիոնուկլիդային կազմը, համապատասխան ռադիոլոգիական վտանգի մակարդակն ու բնակչության քաղցկեղածին ռիսկը: Հիմնական ակնկալվող արդյունք է հանդիսանում ռադիոնուկլիդների բաշխվածության քարտեզները:

Կենսաէներգիայի և կերային ռեսուրսների բաժին. Նախատեսվում է գնահատել Գեղամա լեռնաշղթայի չոր տափաստանային գոտու արոտների վրա երկարատև չհամակարգված արածեցման թողած հետևանքները: Աշխատանքի նպատակն է գնահատել արոտների արդյունավետության վրա երկարատև չհամակարգված արածեցման թողած հետևանքները: Խնդիր է դրվել որոշել փորձատեղամասերի արդյունավետությունը, բուսական կազմը, տերև/ցողուն հարաբերությունը, պիզմենտների պարունակությունը, հողի խոնավությունը, թթվայնությունը և N, P, K- ի քանակությունը, ինչպես նաև տարածքի դիրքադրությունը և ռելիեֆի առանձնահատկությունները:

ԱՏՀ և հեռազննման բաժին. նախատեսվում է շարունակել Լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների մշակմանն ուղղված աշխատանքները: կլիմայի փոփոխության պայմաններում գյուղատնտեսական հողահանդակների էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդի կատարելագործում՝ նեյրոնային ցանցերի վրա հիմնված մեքենայացված ուսուցման (Machine Learning: ML) ալգորիթմների կիրառմամբ: Հողօգտագործման (land cover/land use) տարածաժամանակային փոփոխության քարտեզագրման հեռազննման մեթոդի մշակում՝ նեյրոնային ցանցերի վրա հիմնված մեքենայացված ուսուցման (Machine Learning: ML) ալգորիթմների կիրառմամբ:

Մննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվավերլուծական կենտրոն. շարունակվելու են սննդամթերքի անվտանգության համակարգերի ներդրման հիմնահարցերին ուղղված գիտամեթոդական բնույթի հետազոտությունները: Վերջինիս նպատակն է սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկահեն համակարգերի ներդրման գիտամեթոդական հենքի ապահովումը: Մննդամթերքի անվտանգության համակարգերի ներդրման մեթոդական ուղեցույցի մշակում:

UNESCO-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոն. ամբիոնն իր գործունեությամբ կշարունակի աջակցել “Կրթություն հանուն կայուն զարգացման” գործընթացին և նպաստել գիտության ոլորտի 3 (կրթական, հետազոտական և ինովացիոն) բաղադրիչների ինտեգրմանն ազգային և տարածաշրջանային մակարդակներով: Ամբիոնն հնարավորության սահմաններում կհամագործակցի Էկոկենտրոնի կազմում գործող “Բնապահպանություն և բնօգտագործում” մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստմանը՝ ապահովելով համապատասխան տեղեկատվություն և ինտերակտիվ մեթոդներ:

2020թ.-ին ծրագրով նախատեսված կիրառական աշխատանքները բերված են ստորև՝ ըստ առանձին ուղղությունների և ստորաբաժանումների:

Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժին. քաղաքային տարածքների փողոցային փոշում առկա տոքսիկ տարրերի մարդու առողջությանն ուղղված ռիսկի գնահատում, քարտեզագրում և ռիսկային տեղամասերի առանձնացում: Ստեղծվելու են առողջական ռիսկի մակարդակների

տարածաբաշխման քարտեզները, որոնք անհրաժեշտ էլքային նյութ են հանդիսանում միջավայրում ռիսկի նվազեցմանն ուղղված հետագա միջոցառումների պլանավորման համար: Հրագրան գետի Երևան քաղաքում ընկած հատվածի ջրի օգտագործման նպատակահարմարության սահմանում՝ ըստ ոռոգման, ռեկրեացիոն, կոմունալ և ձկնաբուծական և այլ նպատակով: Ռադիոէկոլոգիայի բաժին. կիրառական արդյունքը արտահանվող ապրանքներում (սննդամթերք, հանքային ջուր, շինարարական քարեր և այլն) բնական ռադիոնուկլիդների ակտիվության որոշման ծառայությունն է: Ծառայության պահանջարկը մեծ է, քանի որ ԵԱՏՄ երկրների միասնական ստանդարտների համաձայն բնական ռադիոակտիվությունը մի շարք ապրանքներում ենթարկվում է նորմավորման: Բացի դրանից հայկական ապրանքների արտահանումն ունի աճի միտում:

Կենսաէներգիայի և կերային ռեսուրսների բաժին. դաշտային և լաբորատոր հետազոտություններից ստացված տվյալների բազան, որը կբացահայտի գերարածեցված գյուղամերձ արոտների ցածր արդյունավետության և բուսածածկի անհամասեռ բաշխման պատճառները, ուստի այն կարող է օգտագործվել արոտների բարելավման ծրագրերում: Արդյունքի հիմնական բնութագրիչներ են՝ բուսազանգվածի տատանումները, բուսածածկի լերկությունը, կենսաբազմազանության փոփոխությունը և հողերի ուսումնասիրված չափորոշիչները:

ԱՏՀ և հեռազննման բաժին. Կլիմայի ժամանակակից փոփոխության պայմաններում լանդշաֆտների պահպանմանն ու պլանավորմանն ուղղված գիտահեն որոշումները պահանջում են որոշումների կայացման տեղեկատվական համակարգի ստեղծում: Այդ պահանջից ելնելով նախատեսվում է շարունակել որոշումների կայացման տեղեկատվական համակարգի պարտադիր բաղադրիչ հանդիսացող լանդշաֆտների էկոլոգիական մոնիթորինգի հեռազննման համակարգի ստեղծմանն ուղղված աշխատանքները, որի ստեղծմանն են ծառայելու նաև հիմնարար հետազոտությունների արդյունքները:

Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվավերլուծական կենտրոն. Շարունակական կիրառական հետազոտություններն ուղղված են սննդամթերքի անվտանգության գնահատմանը և ռիսկի վրա հիմնված որոշումների կայացման համակարգի ներդրմանը ՀՀ-ում: Նախատեսվում է Սննդամթերքում քիմիական վտանգների ռիսկի գնահատում և սննդակարգային ուսումնասիրություններ: Շարունակվող ծրագրով նախատեսված ծառայություններն ուղղված են պետական մոնիթորինգների օժանդակմանը:

Կազմակերպության
տնօրեն Ժ.Այ.Կ`  (Լ.Սահակյան)
(ստորագրություն) (սևույն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար`  (Լ.Սահակյան)
(ստորագրություն) (սևույն ազգանուն)



ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Իրականացվելիք միջոցառման						
h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ ՀՀ տարբեր շրջաններում	1. Քաղաք. տարածքների փողոց, փոշու մեխանիկ. և քիմ. կազմի ուսումնասիրում, փողոցային փոշու մեխանիկական և քիմիական կազմի առանձնահատկությունների դուրսբերում և մարդու առողջությանն ուղղված ռիսկի գնահատում, քարտեզագրում, ռիսկային տեղամասերի առանձնացում:	Փոշու կազմության տվյալների բազա՝ ներառյալ վնասակար տարրերի պարունակությունները և մարդու առողջությանն ուղղված ռիսկի քարտեզները:	Տվյալների բազա, Քարտեզ, գրաֆիկ, վիճակագրություն, Հոդվածներ Հաշվետվություն	I Եռամսյակ	29188.1
		2. Հրազդան գետի ջրերի նմուշառում և տարրալուծման աշխատանքներ, ջրի որակի գնահատում	Ջրի որակի բնութագիր		II Եռամսյակ	
		3. Երևան քաղաքի ծառատեսակների քլոր պարունակող միացությունների կլանման առանձնահատկությունների հետազոտություն և բարձր ֆիտոֆիլտրային հատկություններով էկոլոգիապես կայուն բուսատեսակներ տեսականու դուրսբերում:	Բարձր ֆիտոֆիլտրային հատկություններով էկոլոգիապես կայուն բուսատեսակներ տեսականի, Գետի ջրի օգտագործման թույլատրելի ոլորտների ցանկ		III Եռամսյակ	
		4. Հրազդան գետի ջրերի նմուշառում և տարրալուծման աշխատանքներ, ջրի որակի գնահատում			IV Եռամսյակ	
		5. Արդյունքների ամփոփում, Հոդվածների մշակում Հաշվետվությունների կազմում:	Հոդվածների և հաշվետվության ատկայություն			
ԱՏՀ և հետազննման տեխնոլոգիաների բաժին	Լանդշաֆտային պլանավորման և լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների մշակում և էկոլոգիական մոնիթորինգի	կլիմայի փոփոխության պայմաններում գյուղատնտեսական հողահանդակների էկոլոգիական վիճակի գնահատման հետազննման մեթոդի	Հետազննման տվյալների կիրառմամբ գյուղատնտեսական հողահանդակների էկոլոգիական վիճակի գնահատման ստուգաչափված մոդել-	I, II, Եռամսյակներ	18000.0	

		հեռագնման համակարգի ստեղծում:	կատարելագործում ներդրումային ցանցերի վրա հիմնված մեքենայացված ուսուցման (Machine Learning: ML) ալգորիթմների կիրառում:	ալգորիթմներ: Թեմատիկ քարտեզներ, տեղեկատվական բազաներ, գիտական հոդվածներ:		
		Հողօգտագործման (land cover/land use) տարածաժամանակային փոփոխության քարտեզագրման հեռագնման մեթոդի մշակում ներդրումային ցանցերի վրա հիմնված մեքենայացված ուսուցման (Machine Learning: ML) ալգորիթմների կիրառում:	Հողօգտագործման ձևերի համաձայն առանձին հողատեսքերի ավտոմատ ռեժիմում վերծանման ալգորիթմ:	Թեմատիկ քարտեզներ, տեղեկատվական բազաներ, գիտական հոդվածներ:	III, IV եռամսյակներ	
3	Ռադիոէկոլոգիայի բաժին	Ալավերդի քաղաքի շրջակա միջավայրում բնական տեխնածին ռադիոնուկլիդների բաշխվածության ուսումնասիրում, հանքարդյունաբերության ազդեցությամբ տեխնոլոգիապես ավելացված բնական ռադիոակտիվության գնահատում	Արխիվային հողային նմուշների զամասպեկտրաչափություն	Տարրալուծման արդյունքներ: Բն. ու տեխնածին ռադիոնուկլիդների ակտիվություն	I եռամսյակ	15000.0
			Բնակչ. կլանված դոզաների և առողջական ռիսկի գնահատում, թվայնացում	Քարտեզներ, տվյալների հենք: Տվյալների էլեկտրոնային հենք	II-III եռամսյակ	
			Արդյունքների ամփոփում	Գիտ. հոդված. պատրաստում, հրատարակում: Հոդվածների բնագրեր, հրատարակված հոդվածներ	IV եռամսյակ	
		Արտահանվող ապրանքներում բնական ռադիոնուկլիդների որոշման ծառայություն	Տարբեր միջավայր. (աննդամթերք, հանքային ջուր, մետաղի ջարդոն, և այլն) ռադիոնուկլիդների որոշման առկա UO ₂ -ների վերանայում և կատարելագործում, անհրաժեշտ նոր UO ₂ -ների մշակում	Բնական ռադիոնուկլիդների որոշման UO ₂ -ներ հետազոտվող յուրաքանչյուր ապրանքի համար: Լրամշակված UO ₂ -ներ	I-II եռամսյակ	
	Հրազդան գետի ջրի և հատակային նստվածքների ռադիոէկոլոգիական հետազոտություններ	Նախապատրաստական, դաշտային և տարրալուծման աշխատանքներ	Նմուշներ, տարրալուծման արդյունքներ, Դաշտային գրանցամատյաններ, տարրալուծման արձանագրություններ	I-III եռամսյակ		
		Արդյունքների ամփոփում	Գիտական հոդվածների պատրաստում, հրատարակում, Գիտական հոդվածների բնագրեր, հրատարակված հոդվածներ	IV եռամսյակ		
4	Կենսաէներգիա և կերային ռեսուրսներ	Չոր տափաստանային գոտու արոտների ուսումնասիրություն (Գեդաճա լեռնաշղթայի օրինակով)	Նախատեսվում է որոշ համայնքամերձ արոտներում իրականացնել հետևյալ հետազոտությունները. տարբեր տարածքներում կիրականացվի բուսականզվածի չոր կշռի, դրանում առանձին բուսախմբերի մասնաբաժնի, տերև/ցողուն	Հավաքագրել գիտական հրապարակումներ և վիճակագրական տեղեկատվություն: Իրականացնել դաշտային և լաբորատոր հետազոտությունների նախապատրաստական աշխատանքներ: Գիտատեղեկատվական բազա՝ արոտների վրա	I	12000.0

			<p>հարաբերության, տերններում պիգմենտների, իսկ հողում ազոտի և ֆոսֆորի քանակության որոշումներ:</p> <p>Ստացված տվյալների վերլուծությունը կարող է բացահայտել տեղամասերի արդյունավետության և նշված ցուցանիշների միջև առկա համահարաբերակցական կախվածությունը:</p>	<p>արածեցման թողած ազդեցության վերաբերյալ:</p> <p>Կատարել Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջի թույլ արածեցված տեղամասերի ընտրություն: Իրականացնել բուսազանգվածի և հողերի նմուշառում: Ընտրված փորձատեղամասեր, բուսական և հողային նմուշների հավաքածու:</p> <p>Որոշել հիմնական բուսատեսակները, ընդհանուր բուսազանգվածի, առանձին բուսախմբերի և տերևների չոր կշիռը, պիգմենտների և հողերում N, P-ի քանակությունը: Բուսաբանական կազմի, արդյունավետության ցուցանիշների և հողերում N, P-ի վերաբերյալ տվյալների համակարգչային բազա:</p> <p>Ամփոփել և վերլուծել ստացված փորձնական նյութը՝ հաշվետվության և հողվածների նախապատրաստման համար:</p> <p>Ամփոփիչ հաշվետվություն: Փաստացի նյութ՝ հողվածներ հրատարակելու համար:</p>	II	
					III	
					IV	
5	Յունեսկո-ի «կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոն	«Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության շրջանակներում մագիստրոսական կրթության աջակցություն,	Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ մագիստրոսական թեզերում նորարարության ներմուծում, սեմինար վարժանքների կազմակերպում, թրեյնինգների իրականացում	Դասընթացներ, տեղեկատվական փաթեթներ, վերապատրաստված թիրախային խմբեր, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «ԿԿԶ» ամբիոնի կողմից տրված վկայականներ	I	4000.0
		UNESCO-ի բազային դպրոցների հետ «Շրջակա միջավայրի աղտոտվածության վերաբերյալ» կիսամյակային դասընթաց-սեմինարների անցկացում	«Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի հետ համատեղ բնապահպանական գիտա-կրթական ծրագրերի և միջոցառումների իրականացում, մասնակցություն, գիտական փորձերին	Սկայայ հանդիպումներ, կիսամյակային դասընթաց-սեմինարներ, իրազեկված սովորողներ «Շրջակա միջավայրի աղտոտվածության վերաբերյալ» պրեզենտացիաներ, ռեֆերատներ,	II	

		Կրթություն հանուն կայուն զարգացման ոլորտներում գիտական հետազոտությունների իրականացում	1.«Ավագ դպրոցի սովորողների քաղաքացիական կոմպետենտության ձևավորման մոդել» գիտական թեմայի շրջանակներում Հայաստանի և Ռուսաստանի մշակութային ավանդույթների համեմատական վերլուծություն, փորձի փոխանակում 2.«Բաց կայուն» դպրոցի մոդելի փորձարկում UNESCO-ի բազային դպրոցներում	1.Ազգային մշակույթի ավանդույթների միջոցով սովորողների քաղաքացիական կոմպետենտության ձևավորման փորձարկված մոդել, 2. Հանրակրթության ոլորտի հետ ընդլայնված համագործակցություն, «Բաց կայուն» դպրոցի մոդելով գործող UNESCO-ի բազային դպրոցներ Համատեղ հոդվածներ, համատեղ ծրագրեր	III	
		Տեղական և միջազգային համագործակցություն, բնապահպանական գիտակրթական ծրագրերի բազաների պարբերաբար լրամշակում	Տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կապերի ընդլայնում, բնապահպանական կրթության ցանցի (ԲԿՑ) աշխատանքներին ներգրավում, տեղեկատվության փոխանակում UNITWIN Networks, Copernicus Alliance, ENSI, Info CENN, GUPES և այլ ցանցերում:	Համատեղ ծրագրեր, փոխայցելություններ, փորձի փոխանակում, հանդիպումներ, Բնապահպանական կրթության վերաբերյալ լրամշակված բազաներ, Հաշվետվություն	IV	
6	Մանուկ շրջայի ռիսկերի գնահատման տեղեկատվական-վերլուծական կենտրոն	Մանուկների անվտանգության ռիսկահեն համակարգերի ներդրման գիտամեթոդական հենքի ապահովում:	Անհրաժեշտ գրականության, նորմատիվների և օրենսդրական ակտերի հավաքագրում:	Մանուկների անվտանգության համակարգերի ներդրման մեթոդական ուղեցույցի մշակում: Մանուկների անվտանգության համակարգերի ներդրման մեթոդական ուղեցույց:	I եռամսյակ	21000.0
		Մանուկներում քիմիական վտանգների ռիսկի գնահատում:	Շարունակվելու են պարենամիթերի շուկայում լայն ապառում ունեցող միթերներում քիմիական վտանգներով պայմանավորված ռիսկերի գնահատմանն ուղղված աշխատանքները:	Շուկաներում շրջայցերի իրականացում, միթերների նմուշառում, ռիսկի գնահատում, ստացված տվյալների վերլուծություն և ամփոփում: Արդյունքների գիտական հիմնավորում:	III եռամսյակ	
		Մանուկարգային ուսումնասիրություններ:	Շարունակվելու են ազգաբնակչության շրջանում միթերների սպառման վերաբերյալ հարցումները, տվյալների մուտքագրումն ու վերլուծությունը:	SPSS ծրագրում ներմուծված՝ սննդամիթերի սպառման տվյալների հենքի ստեղծում և թարմացում: Ներազդեցության (Էքսպոզիցիայի) գնահատման	IV եռամսյակ	

			նպատակով կիրառելի տվյալների հենք:		
Ընդամենը					99188.1

Կազմակերպության
Տնօրենի ժ.պ.կ՝

(ստորագրություն)

(Լիլիթ Սահակյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

(Լիլիթ Սահակյան)
(անուն ազգանուն)



ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	81069.7	16214.0	20267.4	20267.4	24320.9
2	տնտեսական և այլ ծախսեր*	18118.4	3623.7	4529.6	4529.6	5435.5
ԸՆԴԱՄԵՆԸ		99188.1	19837.7	24797.0	24797.0	29756.4

Կազմակերպության Տնօրենի ժ.պ.կ.


 (ստորագրություն)

(Լ.Սահակյան)
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

(Տ.Տամակյան)
 (անուն ազգանուն)




Կ.Տ.

* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՄԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	7332.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	3492.0
	գազի ծառայություն	-
	ջրամատակարարման ծառայություն	50.0
	կապի ծառայություն	3730.0
	աղբահանություն	60.0
2	Գույք	1618.2
3	Սարքեր և սարքավորումներ	1668.2
4	Նյութեր	2500.0
5	Գործուղումներ	3000.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	500.0
	Այլ	1500.0
Ընդամենը		18118.4

Կազմակերպության տնօրենի ժ.պ.կ.


 (ստորագրություն)

(Լ.Սահակյան)

(անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

(Տ.Քահակյան)

(անուն ազգանուն)



Կ.Տ.

* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1		տնօրեն		224.0
2	Սահակյան Լիլիթ Վարուժանի	գիտ.գծով փոխտնօրեն	աշխ.գիտ.թեկն.	181.0
3		գլխավոր գիտաշխատող		175.0
4	Ավետիսյան Մարիետա Համլետի	գիտ.քարտուղար	աշխ.գիտ.թեկն.	149.0
5	Գևորգյան Դիանա Անուշավանի	ընդհ.բաժնի վարիչ	-	133.0
6	Իսահակյան Տարուշ Վարդանի	գլխ.հաշվապահ	-	133.0
7	Մկրտչյան Մարինա Յուրիի	կադրերի ավագ տեսուչ	-	133.0
8	Բաբայան Գայանե Հրանտի	անալիտ.աշխ.համակարգող	տեխ.գիտ.դոկ.	122.0
9		գնումների համակարգող	-	85.0
10	Բեյլերյան Անահիտ Նորայրի	ռեֆերենտ թարգմանիչ	-	103.0
11	Գալոյան Մարիաննա Սարգսի	համ. օպերատոր	-	103.0
12	Պիպոյան Դավիթ Աշոտի	կենտրոնի ղեկավար	սննդագիտ.դոկ. (Բտալիա)	150.0
13	Մեծունց Բագրատ Խաչատուրի	բաժնի ղեկավար	գյուղ.գիտ.դոկ.	128.0
14	Տեփանոսյան Գևորգ Հովհաննեսի	բաժնի ղեկավար	կենս.գիտ.թեկն.	128.0
15	Ասմարյան Շառլանիկ Գուրգենի	բաժնի ղեկավար	աշխ.գիտ.թեկն.	128.0
16	Բեյլանա Օլգա Ալեքսանդրի	բաժնի ղեկավար	կենս.գիտ.թեկն.	128.0
17	Պողոսյան Գայանե Մուրենի	ամբիոնի վարիչ	կենս.գիտ.թեկն.	114.0
18	Բեգլարյան Մելինե Ռադիկի	խմբի ղեկավար	տեխ.գիտ.թեկն.	114.0
19	Հովհաննիսյան Հասմիկ Ալբերտի	առաջատար գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	122.0
20	Մուրադյան Ամալյա Համբարձումի	ավագ գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	106.0
21	Նավասարդյան Մարինե Արագու	ավագ գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	106.0
22	Ներսիսյան Գայանե Սամվելի	ավագ գիտ.աշխատող /համ/	կենս.գիտ.թեկն.	78.0
23	Մուրադյան Վահագն Մուսի	ավագ գիտ.աշխատող	աշխ.գիտ.թեկն.	106.0
24	Փյունսկյուլյան Կոնստանտին Իվանի	ավագ գիտ.աշխատող /համ/	ֆիզ.-մաթ.գիտ.թեկն.	100.0
25	Մաղաքյան Նաիրուհի Ռաֆիկի	գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	104.0
26	Տեփանոսյան Գարեգին Հովհաննեսի	գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	104.0
27	Հարությունյան Նորիկ Մարտիկի	կրտսեր գիտ.աշխատող	-	96.620
28	Սարգսյան Տաթևիկ Աշոտի	կրտսեր գիտ.աշխատող	-	96.620
29	Հովսեփյան Ազատուհի Արծրունու	կրտսեր գիտ.աշխատող	-	96.620
30		կրտսեր գիտ.աշխատող	-	96.620
31	Սաքոյան Աստղիկ Գուրգենի	քիմ.անալիտիկ	կենս.գիտ.թեկն.	96.620
32	Հայրապետյան Էլիզա Հմայակի	քիմ.անալիտիկ	-	96.620
33		քիմ.անալիտիկ	-	96.620
34		քիմ.անալիտիկ	-	96.620
35	Անանյան Ռուզաննա Ալեքսեյի	ավ.լաբ.հետազոտող /համ/	-	65.0
36		ավագ լաբ.-հետազոտող	-	92.620
37	Մելքոնյան Գայանե Աշոտի	լաբորանտ-հետազոտող	-	92.620
38	Գևորգյան Աստղիկ Տիգրանի	լաբորանտ-հետազոտող	-	92.620
39	Պողոսյան Դավիթ Կարենի	լաբորանտ-հետազոտող/ժամ/	-	52.0

40	Այվազյան Գրիգոր Միերի	լաբորանտ-հետազոտող		92.620
41	Մովսիսյան Նոնա Էդիկի	լաբորանտ-հետազոտող	-	92.620
42	Դեմիրճյան Գարրի Արթուրի	լաբորանտ-հետազոտող	-	92.620
43	Ստեփանյան Ստելյա Արթուրի	լաբորանտ-հետազոտող	-	92.620
44	Ստեփանյան Սեդա Արթուրի	լաբորանտ-հետազոտող	-	92.620
45		լաբորանտ-հետազոտող/4ժամ/	-	52.0
46	Յարմալոյան Քրիստինե Վարդանի	լաբորանտ-հետազոտող/4ժամ/	-	46.980
47	Սիրեյան Լիանա Արայիկի	փորձագետ	-	92.620
48	Հովհաննիսյան Աստղիկ Սերգեյի	փորձագետ	-	92.620
49	Աբրահամյան Արմեն Սարգսի	փորձագետ	-	92.620
50	Պողոսյալ Լիլիթ Վաղարշակի	փորձագետ/4ժամ/	-	52.0
51	Ղարիբյան Գոհար Քրիստափորի	փորձագետ /4ժամ/	-	46.980
52	Եսայան Ջուլիետտա Յուրիի	փորձագետ /4ժամ/	-	46.980
53	Ամիրջանյան Անի Հայկազի	փորձագետ /4ժամ/	-	46.980
54	Սարգսյան Աննա Էդուարդի	փորձագետ /4ժամ/	-	46.980
55	Թաթոյան Սիրարփի Ռուսլանի	մեթոդիստ	-	92.620
56	Գրիգորյան Մերի Մուրադի	մեթոդիստ	-	46.980
57	Ամիրյան Ելենա Վարոսի	մեթոդիստ	-	92.620
58	Աֆրիկյան Գրետա Գուրգենի	ավագ լաբորանտ	-	89.610
59	Շախնազարովա Յանա Գերասիմի	լաբորանտ	-	92.620
60		գրադարանավար /համ/	-	40.0
61		քաղ պաշտպ.շտաբի պետ /համ/	-	40.0
62		տնտեսվար	-	140.0
63	Աղաբաբյան Տիգրան Վոլոդյայի	ինժեներ էլեկտրիկ /համ/	-	73.0
64	Մարդանյան Գայանե Հովհաննեսի	հավաքարար	-	89.610
65	Մարտիրոսյան Ռոզա Հովհաննեսի	հավաքարար	-	92.620
66	Սահակյան Գևորգ Գուրգենի	վարորդ	-	89.610
67	Բաղայան Արթուր Խաչիկի	վարորդ	-	92.620
68	Երանոսյան Արեգնազ Պարույրի	դռնապահ	-	89.610
69	Ալդինյան Սերյոժա Մուշեղի	դռնապահ	-	89.610
Ընդամենը				6755.81

Կազմակերպության տնօրենի ժ.պ.կ.

(ստորագրություն)

Լիլիթ Սահակյան
(անուն ազգանուն)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝

(ստորագրություն)

Մարինա Մկրտչյան
(անուն ազգանուն)

